

ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԽՕՍԶԸ
Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԱՍՆԱՄԻԼՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԳՐՈՒԹՅԱՆ 60-ԱՄՆԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Հոգեկան մեծ ուրախութեամբ է որ ականատես եղած ենք Հ.Բ.Ը.Միութեան ընտանիքի միւղաւորման աշխարհի զրեթէ բոլոր հայաշատ կեդրոններուն մէջ:

Հ.Բ.Ը.Միութիւնը, որ բարեսիրական ազգային մեծագոյն հաստատութիւնն է, շնորհիւ իր մասնամիւղերուն, նպաստած է եւ կը շարունակէ նպաստել մեր կրթական եւ հայապահպանման ազնիւ գործին: Այսօր, Հ.Բ.Ը.Միութիւնը վերածուած է իւրայատուկ ``դպրոց``ի մը որմէ ``չըջանաւարտ``ները դարձած են տարածիչներն ու գործօն մասնակիցները նոյն զաղափարին ու իտէալին:

Մենք կրնանք հաստատել որ Հ.Բ.Ը.Միութեան Թորոնթոյի մասնամիւղը, իր հիմնադրութենէն մինչեւ թուականս, կատարած է օգտակար եւ արդիւնաւոր աշխատանք՝ շնորհիւ իր նուիրեալ հիմնադիրներուն, անդամներուն եւ գործունեայ յանձնախումբերուն: Իսկ Ալեք Մանուկեան մշակութային զեղակերտ լիցիոնը իր անդամներուն մէջ ստեղծած է նոր հորիզոններու եւ հեռանկարներու խանդավառութիւնը:

Կոողջունենք Հ.Բ.Ը.Միութեան Թորոնթոյի Մասնամիւղի 60-ամեակը, եւ կը մաղթենք որ նոր եռանդով զօրացած՝ կրթական, մշակութային, ընկերային եւ մարզական ասպարէզներու մէջ նոր յաջողութիւններ արձանակրուին եւ Թորոնթոյի մեր համայնքին մէջ, Հայց. Եկեղեցւոյ կողքին, Հ.Բ.Ը.Միութիւնը իր ստանձնած հայապահպանումի սրբազան գործը յառաջ աննի հաստատակամութեամբ եւ վճռակամութեամբ:

Կ'օրհնենք Հ.Բ.Ը.Միութեան Թորոնթոյի Մասնամիւղի հիմնադիրներուն բարի յիշատակը եւ այժմու պատասխանատուներուն կը մաղթենք յարատեւութիւն եւ առաւել յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Յուլիս 22, 1988
Կիւ Նորք, Ն.Ն.